ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

375051, Երևան, Կոմիտասի պողոտա հ. 37/4, հեռ. / ֆաքս 203027, E-mail:kpt@edu.am

№ 04/24.3/5348-12 «06» 06 2012թ.

<<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> ՀԿ-ի
իրավաբան Գ. Հայրապետյանին

Ի պատասխան Ձեր՝ 29.05.2012թ.
N 172-ի 3 գրության

Հարգելի պարոն Հայրապետյան

2011 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի, այդ թվում նաև կրթության պետական տեսչության աշխատակիցները պարգևատրվել են <<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան: Պարգևավճարների համար հիմք է հանդիսացել վերջիններիս կողմից ներկայացված երկու կիսամյակային հաշվետվությունները:

ՀՀ կրթության պետական տեսչության աշխատակիցները 2011 թվականի աշխատանքային պարտականությունները կատարելու ընթացքում նվերներ չեն ստացել:

Կրթության պետական տեսչությունը ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, իսկ հաշվապահական հաշվառման վարումը՝ համաձայն նախարարության կանոնադրության, վերապահված է աշխատակազմի համապատասխան ստորաբաժանմանը: Պարգևատրված աշխատակիցների (ըստ հաստիքների) և պարգևավճարների ընդհանուր գումարի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ կրթության պետական տեսչության կողմից չի կարող տրամադրվել, քանի որ այն դուրս է վերջինիս կանոնադրական գործառույթների շրջանակից:

Հարգանքով՝

Ա. Կարապետյան

Կատարող՝ ՀՀ կրթության ավագ պետական տեսուչ
Ս. Սահակյան